


ՏԱՍՆ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյուրյն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Маскъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և սուր օրերէն):

Յայտարարութիւնը բնագումարով է ստին լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւաքանչիւր բառին 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Վրաց և հայոց ընտանիքը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Գինեգործական գիտելիքներ. Նամակ
Մոսկովայից. Նամակ Բաթումից. Նամակ Խմբա-
գրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՎԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Փաղաքական աշխարհի երեւոյթները. Արտաքին
լուրեր.—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ՐՈՐԱՍ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆ ԵՐ.

ՎՐԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ԸՆՏԱՆԻՔ

Եթէ հաւատանք «Отверный Вѣст-
никъ» ամսագրում գետեգրող «Письма о
Грузіи» վերնագրով մի շարք յօդուածներին
հեղինակին՝ վրաց ընտանիքը միշտ հիմնա-
կան է եղել մայրապետական (матриар-
хальный) և ոչ թէ հայրապետական (патриар-
хальный) սկզբունքներով կառուցուած ընտանիքն
որ վրաց ընտանիքում միշտ տիրապետել է
և մինչև այսօր էր տիրապետում է մօր
և ոչ թէ հօր իշխանութիւնը: Կինը վր-
աց ընտանիքում թե մարդու ստորուն է
եղել միշտ, բայց կարողացել է խորաման-
կութեամբ տիրապետել ընտանիքի վրա,
որի վրա բռնաւոր, կամայական մարդը
ոչինչ իրական ներգործութիւն չէ ունեցել:
Մարդու ներգործութիւնը վրաց ընտանի-
քում, հեղինակի ասելով, միշտ եղել է մի-
միայն արտաքին, եթէ այսպէս կարելի է
ասել՝ կօպիտ, ֆիզիկական և բաց թաղա-
կան, հոգեւոր կապ գրեթէ երբեք չէ եղել
ամուսնիւնների մէջ: Այդ բաւական չէ. հե-
ղինակի կարծիքով վրաց բոլոր ցեղերին ըն-
տանիքի մէջ տիրապետող սկզբունքը՝ ա-
ւելի ցեղական, քան ընտանիքային, ազ-
գայական սկզբունք է եղել, քան թէ
անհատական: Հեղինակը հաւատաց-
ում է որ վրացական կինը և մարդը
պատկերով չեն կազմում մի ամուսնական
նոր, անհատական, անկախ ընկերակցու-
թիւն, այլ ամուսնիւններից իւրաքանչիւրը
շարունակում է անկախ կապեր պահպա-
նել իր ազգականների հետ: Ամուսնիւնների
իրար մէջ եղած կապերը աւելի թույլ են, քան
կնոջ իր ազգականների և մարդու իր ազ-
գականների հետ ունեցած ցեղական կա-
պերը: Այդ է պատճառը որ վրաց ընտա-
նիքը գրեթէ զուրկ է ընտանեկան, անհա-
տական, և սակայն զարգացումից, անկա-
րող լինելով կազմակերպւել որպէս նոր,
անհատական ընկերակցութիւն, և
նրա երկու ներկայացուցիչները անկարող
լինելով մի անգամ ընդ միշտ խզել իւրա-
քանչիւրը իր կողմից, իրանց կապերը
նախկին ազգականութեան հետ և աւելի
ամրապնդել իրանց փոխադարձ ամուսնա-
կան կապերը: Այդ է պատճառը, որ վրաց
ընտանիքում նոյն իսկ զաւակները աւելի
քիչ նշանակութիւն ունեն ծնողների հա-
մար, քան թէ վերջինների հայրն ու մայրը,
քոյրը, եղբայրը, հօրեղբայրը, մորաքոյրը, և
այլն: Հեղինակը այդ հանգամանքին է վի-
րադրում այն երեւոյթը, որ վրաց ընտանի-
քի ներքին, ընտանեկան կեանքն էլ մեծ
մասամբ լինում է անկողմ. ընտանիք
մասնիկ, մարդ կարծում է թէ դա ոչ թէ
մի մշտական, այլ ժամանակաւոր կացու-
թիւն է, տան մէջ չը կան յարմարութիւն-
ներ, չը կայ ակոթիկի սաղար ու կարգ, չը
կայ կնոջ անխնայ աշխատանքը, բացակայ է
կնոջ խնամող ձեռքը, բացակայ է մօր խը-
նամբը երեխաների վրա: Մինչդեռ մարդը
գրեթէ միշտ բացակայ է ընտանիքից, կի-
նը այնքան չէ զբաղւում զաւակների խը-
նամբով, կամ տան տնտեսութեամբ, որ-
քան հիւրերը ընդունելով և այն էլ մեծ
մասամբ իր հօրն ու մօր, իր հայրական
տան ազգականներին ընդունելով, կամ նը-
րանց մօտ հիւր դնելով, քանի որ դէպի իր
նախկին ընտանիքը նա մինչև կեանքի
վերջը աւելի ազգայական գաղափարներ
ունի, քան թէ դէպի իր ամուսնին ու զա-
ւակները:

Եթէ ուսումնասիրել աշխատակցի կար-
ծիքը ուղիղ է (մենք ընդունում ենք որ
հեղինակը վրաց կեանքին ծանօթ է և
կենք վրացի է),—այն ժամանակ պէտք է
խոստովանւել, որ վրաց ընտանիքի հետ
համեմատելով՝ հայոց ընտանիքը մի կա-
տարեալ հայապետական է ներկայացնում:
Հայ ընտանիքը միշտ հիմնական է եղել
ոչ թէ մայրապետական (матриархальный),
այլ հայրապետական (патриархальный)
իշխանութեան սկզբունքի վրա: Հօր ոյժը,
հօր կամքը, հօր իշխանութիւնը,—ան-
սխալական է և անբեկաբարեկէլ է ընտա-
նիքում: ամեն բան անպայման և կուրորէն
հպատակւում է նրան: Այդ ոյժը սահ-
մաններ չունի և հասնում է նոյն իսկ
անասելի կամայականութեան: Կինը, գուցէ
և ստորակ է, բայց նա աշխատող, տնտես
ամուսին է, միմիայն ընտանիքով, տնով,
զաւակներով զբաղւող մայր է: Հայ աղջի-
կը երբ մի անգամ պատկանէ,—նա ընդմիշտ
խղում է իր բոլոր բարոյական ազգայնա-
կան կապերը իր նախկին ընտանիքի հետ,
կատարելապէս անձնատուր է լինում իր մար-
դուն, նրա տանը, նա այլ ևս իր կամքը չունի,
բացի մարդու կամքից, նա այլ ևս ազգա-
կանները չունի, բացի իր մարդու ազգա-
կաններից: Այդ է պատճառը, որ հայ ըն-
տանիքում մարդու ազգականութիւնը ան-
համեմատ աւելի ազդեցութիւն ունի, քան
թէ կնոջ ազգականութիւնը, այդ է պատ-
ճառը որ հայ ընտանիքում կնոջ հայրը
կամ մայրը ոչինչ ներգործութիւն չունեն,
իսկ մարդու մայրն ու հայրը, նոյն իսկ մեծ
մայրն ու մեծ հայրը,—մինչև իրանց մա-
հր պահպանում են իրանց ազգականութիւնը:
Եթէ վրաց նոր կազմակերպւող ընտա-
նիքը զուրկ է անհատականութիւնից և
անկախ ընտանեկան գիւղից, ուրիշ կողմից
հայ ընտանիքը շատ անգամ ծայրայեղու-
թեան է հասնում իր անհատական
նոյն իսկ և սակայն կազմակերպութեան
մէջ: Յաճախ է պատահում տեսնել, որ
հայ ամուսնական զոյգը, պատկերւում պէս
միանգամայն կարում է իր բոլոր կապերը
երկու կողմի ազգականների հետ, կատա-
րելապէս սահմանափակւելով իր նոր ըն-
տանեկան շրջանի մէջ, կատարելապէս ա-
ռանձնանալով, անդիտակցական և անյաղ-
թելի ձգտում ունենալով ամուսնապէս կազ-
մակերպել մի նոր ընտանեկան, անհատա-
կան, նոյն իսկ նսական ընկերակցութիւն:
Այդ է պատճառը, որ ոչ մի տեղ զուր
չէ տեսնել այդքան յաճախ այն երեւոյթը,
որ ամեն օր կարող էր զիստը հայ հասա-
րակութեան մէջ, երիտասարդ զոյգը ան-
միջապէս պատկերւուց յետոյ՝ թշնամանում
է թէ մի կողմի և թէ միւս կողմի բոլոր
մօտիկ և հեռու ազգականների հետ՝ իր
անհատական, առանձնացած, նսական ըն-
տանեկան կեանքը կատարելապէս և լիովին
ապահովւած լինելու և վայելելու համար:
Եթէ վրաց ընտանիքը զուրկ է անհա-
տականութիւնից,—ուրիշ կողմից հայ ըն-
տանիքը շատ անգամ ծայրայեղութեան է
հասնում նոյն անհատական սկզբունքը, և
շատ անգամ նոյն իսկ ի վնաս ընդհանուր
հասարակական սկզբունքի, ի վնաս լայն
հասարակական համերաշխութեան ըսկզ-
բունքի:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՆԵՂՈՐԴԱՎԱՆ ԳԻՏԵԼԻԲԵՆԵՐ

Մեր նախնիքաց յօդուածում նկարագրեցինք
Վարդգէս-Նաչաւան անող մեքենան: Այժմ հարց
է ծագում թէ ինչ օգուտ կարող է ունենալ չա-
նը խաղողի միւս մասերից շոկելը, և արդեօք
ինչ դիպագումով այդ պիտի անել և երբ չը պի-

տի զործարդել: Ամենից առաջ յայտնում ենք,
որ դա սպիտակ խաղողին չէ վերաբերում:
Հարցը պարզ հասկանալի դարձնելու համար
նախ պէտք է ծանօթանալ թէ ինչ նիւթերից է
բաղկացած չաւնը և յետոյ թէ այդ նիւթերը դի-
նուն ինչ քանակութեամբ են հարկաւոր: Յայտնի
է որ չաւնը աւելի պարունակում է իր մէջ թը-
թու և դառը մասեր: Միւս կողմից գիտենք, որ
գինին այնքան դիմացկուն է և չողին առանց
վնասի դիմացող, որքան աւելի թթու և դառն
է մասեր ունի: Բայց բանը նրանումն է, որ թթու
և դառը մասերի ներկայութիւնն էլ՝ մանաւանդ
երբ մի որոշ քանակութիւնից անցնում է, գի-
նին կոպիտ է դարձնում և կոշտ: Մասնաւոր երբ
մարդ ուզում է որ գինին շուտ կաղմկի, շուտ
ծախի, այն ժամանակ պէտք է աշխատել, որ-
պէս զի գինին չը ծանցաբեռնվի թթու և դա-
ռը մասերով: Ուրեմն հեշտ է եղբայրացին, որ
չաւնը երբեմն կարող է օգտաւէտ լինել և երբե-
մն ընդհակառակը՝ վնասակար: Օրինակ Ֆրան-
սիայի զանազան նշանաւոր գինեգործական նա-
հանդներում, ինչպէս Բուրգոնիայում և Բորգո-
նիում, զանազան տեսակ են վարում խաղողի
նետ: Բուրգոնիայում չաւնը թողնում են և
մինչև անգամ պնդում են, որ անկախելի է
լաւ գինի ունենալ առանց չաւնի, իսկ ընդ-
հակառակը Բորգոնիում, չաւնըրը դէն են գցում,
ջուրով են, յաջորդ խաղողը սովորաբար իր
կատարելապէս անուսնութեամբ չէ հասնում, զրա
համար էլ նրա շիրան առանց չաւնի էլ բա-
ւականաչափ թթու և դառը մասեր ունի, այն-
պէս որ եթէ չաւնը թողնեն՝ միանգամայն ան-
պէտք գինի կը ստացվի: Ուրեմն չաւնահան անի-
լը կախված է տեղական և մասնաւոր պայմա-
ններից: Բացի այն որ քիչ հասնող խաղողների
շիրան և չաւնըրը չափից դուրս թթու և դառը մա-
սեր են մասնաւորաբար, այլ և ի նկատի պէտք
է առնել որ զոքան փոխաբան չաւնըրը ծծում
են ալիօօլ—որը գինում թուլացնում է, այնպէս
որ առանց այն էլ ալիօօլով աղբաւ գինին պէտք
է ազատ պահել չաւնի ազդեցութիւնից:
Այն տեղերում, որտեղ չաւնահան անելը ան-
հրաժեշտ գինեգործական մի գործողութիւն են
համարում, պէտք է յարմարութիւններ ունենալ:
Եթէ մեծ քանակութեամբ խաղող ունեն, այն
ժամանակ լաւ կը լինի Վարդգէս-Նաչաւան անող
մեքենայի գիծնել, իսկ եթէ ուղում են օտով կոխ
տալ, այն ժամանակ նախ պէտք է չաւնըրը գի-
լաններից բաժանել, ապա գլխանը տորել: Իրա
համար գործ են ածում մեծ խախախտ-շատա-
բարեկ, որոնք հիւսված են լինում կամ մետաղի լա-
րից և կամ ծառի ճիւղերից, այնպէս որ անցքերից
գլխանը աղաւ կերպով կարողանան ցած ընկ-
նել: Եթէ ունեն այդպիսի մի չաւնահան խախա-
լ, այն ժամանակ խաղողի ճիւղերը ածում են նրա
մէջ, մշակները վերցնում են ճիւղը և խախախտ երե-
ւին արագ կերպով շարժելով փոքր ինչ ճնշում
են, որի ժամանակ թէ գլխանը են պոկ գալիս
և թէ մի սկզբնական ջարդման են ենթարկւում:
Պարզ բան է որ խախալի տակ մի աման է զը-
րած լինում խախալի անցքերից վար իջած գի-
լաները ընդունելութեան համար: Ստացած գիլա-
ների հետ վարում են այնպէս, ինչպէս կը վար-
վին եթէ չաւնը չը բաժանէին:

Ան խաղողից սպիտակ գինի ստանալու մասին
մի քանի խոսք: Այն երկրներն, որտեղ ընդհան-
րապէս կարմիր և սպիտակ վաղեր են գտնու-
ւում, և սպիտակ խաղողը ու նրանից ստացած
գինին հազուադիպ է, այն ժամանակ աշխա-
տում են սն խաղողից սպիտակ գինի ստանալ:
Նախ քան պատմելը թէ ինչպէս են այդ անում,
ասենք թէ գինուն գոյն տուող մասը գլխին
մասումն է գտնւում: Իրա համար վերցնենք կար-
միր կամ սն խաղողի մի գլխ, նրան մէջից երկու
մասի բաժանենք և կը տեսնենք որ միջուկը գոյն չու-
նի, աւելի ճիւղէ կանաչ դեղնաւուն է, իսկ կարմիր
մասերը կենտրոնացած են գլխին կաշուի ներքին

երեսի վրա որոնք և տեղաւորված են բազմաթիւ
բարակ թելերից կազմած ցանցերի մէջ գտնվող
խորշերում: Ուրեմն եթէ մեզ աջողի գլխին միջու-
կից շիրայ ստանալ, այնպէս որ այդ շիրան չեն-
թարկվի գոյն տուող մասի ազդեցութեանը, այն
ժամանակ կունենանք սպիտակ շիրայ: Օրինակ մենք
կարող ենք մէկ մէկ գլխաների կաշին պոկել և
առանձին դնել, բայց դա շատ անյարմար միջոց
կը լինէր: Թանգութեան և ժամանակի աղտոյթան
պատճառով: Մի և նոյն նպատակին կարելի է
հասնել նախ՝ խաղողը քաղելուն պէս կախ տալ,
չը թողնել երկար ժամանակ առանց ջարդելու,
և որքան կարելի է աշխատել որ շիրան շատ
չողղի գլխաների կաշին: Իրա համար կան ա-
ռանձնապէս պատրաստած պրեսուարներ,—որոնք
շատ մեծ և լայն յատակ ունեն և փոքրիկ բարձ-
րութիւն: Բաւական է քաղած խաղողը իսկոյն և
եթ այդ պրեսուարի տակ ձգել և շուտով մղել,
ստացած շիրան կը լինի սպիտակ, և արդէն նը-
րանից գինի ստանալու համար կը վարվեն այն-
պէս, ինչպէս պիտի վարվեն սպիտակ խաղողից
ստացած շիրայից գինի ստանալու համար: Արդի-
նում ենք, որ խաղողը երկար ժամանակ չը պէտք
է առանց ջարդելու և մղելու թողնել, որովհետեւ
հակառակ դիպագումով գոյն տուող հիւթերը
լուծվում են գլխին միջուկի շիրայի մէջ և հա-
կանալի է որ այնուհետեւ սպիտակ գինի չի ըս-
տացվի: Ֆրանսիական մի քանի գաւառներում մի
տեսակ ալ գինի են պատրաստում, որին տալիս
են (կարծաւի ալը) անունը: Նա ոչ սպիտակ է և ոչ
կարմիր, այլ երկուսի միջտեղն է բռնում: Այդ
տեսակ գինի ստանալու համար կարմիր խաղողը
ջարդում են և շիրախաւուն ածում են տակաւնե-
րի մէջ. 1/2—1 օրից յետոյ երեսի շիրան քաշում
են, որը ալ գոյն է ունենում:

Մ. Մուսինեան

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Հոկտեմբերի 7-ին

Խմ նամակների գլխաւոր նպատակը լինելու է
հայ ընթերցողներին ուստաց հասարակական
կեանքի հետ ծանօթացնելը՝ որքան այդ կեանքը
արտայայտւում է Մոսկովայում մի կողմից, և որ-
քան միւս կողմից, կարելի է նրա մասին գաղա-
փար կազմել ուստաց գրականութեան միջոցով:
Մի ուստ հրապարակախօս, նորերս իր մի յօ-
դուածում շատ իրաւացի մեղադրում էր ուստ
հեղափոխներին (эпографы), թէ նրանք աւելի
են հետաքրքրւում վայրենի բուսմաններով ու
պապուսաններով, քան ուստաց կայսերութեան
սահմաններում գտնված բազմաթիւ ցեղերով
ու ազգութիւններով: Նոյն յանդիմանութիւնը
յարգելի հրապարակախօսը կարող էր ուղղել ա-
մենայն իրաւամբ և ուստ լեզուագէտներին, օ-
րոնք ուստահապատակ ազգութիւնների պատու-
թեան հետ ծանօթանալու համար ստիպված են
լինում դիմել Ֆրանսիացի ու գերմանացի արեւ-
լադէտների գրուածներին օգնութեան: Իրաւ հրա-
պարակախօսը, կարող էր կատարեալ իրաւունքով
յանդիմանել թէկուզ հէնց այն ճանապարհորդնե-
րին, որոնք մի քանի օր Կովկասում թափառե-
լուց յետոյ, այն էլ օրվա մեծ մասը վազոնում կամ
կառքում անցկացնելով, վերադառնում են Ռու-
սաստան, և դատողութիւն տալիս Կովկասի ազ-
գութիւնների ընտանեկան ու հասարակական
կեանքի, բնաւորութեան, վարք ու բարքի, արժա-
նաւորութիւնների ու պաղատութիւնների և մինչև
անգամ պատմութեան մասին:
Բայց ուրիշ կողմից մենք հայերս էլ շատ քիչ
հասկացողութիւն ունենք ուստաց հասարակական
կեանքի մասին, մեզ չեն հետաքրքրում այն հա-
սարակական երեւոյթները, որոնք կատարվում են
ներքին Ռուսաստանում: Սակայն այդ կեանքի
հետ ծանօթութիւնը կարող էր հայ հասարակու-
թեան մտաւոր հորիզոնը ընդլայնելու, նրա ինք-
նագիտակցութիւնը զարգացնելու և նրա մէջ

խոսակցութիւնը սիրալիր բնութագրութիւն ունէր
Ուշ լինելու պատճառով նախագահ կարնո օտար
ված էր իր փոխադարձ այցելութիւնը յետագային
մինչև այսօր

Աթէնք. 15 հոկտեմբերին վիզէլի կայսրը հա-
տաւ այստեղ կէտորից յետոյ ժամը 4-ին Բողոք
Բարձրագոյն անձինք զնացին կայսրին զիմաւո-
րելու Յունաց թագաւորը և թագուհին զնացին
ողջունելու կայսրին «Հօնէնցօղէրն» նաւի վրա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 13-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէն	95	75
Բեռլինի վրա 100 մարկ	46	80
Փարիզի վրա 100 ֆրանկ	38	—
Սանկտ արծէն	7	71
Մադրասի կուպոններ	153	25
Արծաթ	1	11
Բորսային գիտկոմիտէներ	6	70
Պետական 5% օտոմ. 1-ին շրջանի	99	37
— — — — — 2-րդ	99	50
— — — — — 3-րդ	99	37
— — — — — 4-րդ	99	37
— — — — — 5-րդ	99	37
— — — — — 6-րդ	99	37

Նոր 40/0	84	25
Արեւելեան 50/0 փոխառութիւն. 1-ին շրջ.	99	62
— — — — — 2-րդ	99	37
— — — — — 3-րդ	99	62
Ներքին 50/0 առաջին փոխառութիւն.	255	50
— — — — — երկրորդ	237	—
1/2% 0 բնութաւ.	101	75
Ռուսիայի բնութաւ.	173	—
Նոթերի կոմիտէի փոխառ.	142	50
Եւրոպական ընկերութեան բնութաւ.	99	25
50/0 գրական թղթեր կալուած.	—	—
— — — — — փոխ. կրեդ. ընկ. մատ.	149	75
— — — — — թղթաւ.	91	87
Գրաւ. թղ. Ազն. բանկի	97	75
Գիւղական բանկի	101	87
60/0 գրաւ. թղ. Խիֆլիսի—27 և 43 տ.	97	75
— — — — — Գուկայի—18 և 43 տ.	98	25
Ս. Պետերբուրգի բազմաբային օրդի-	—	—
— — — — — զացիաներ	94	87
Մոսկուայի բազմա. օրդիդաշխաներ.	94	—
Ս. Պետերբուրգի	94	—
Թիֆլիսի բազմա. կրեդ. ընկ. օրդ.	84	25
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը	—	—
ամուր է:	—	—

Խմբագիր-հրատարակող ԳԻՒՂՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

ՍՊԻՏԱԿԵՂԵՆԵՐ ՊԱՏՐԱՍՏՈՂ ԳՈՐԾԱՐԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻՐԻԼԵԱՆԻ

Պատրաստում եմ զանազան տեսակի բրթոտ կամ խաւով երեսաբերներ և բազմաթիւ
համար ամեն տեսակի շորեր. շապիկ, փաթափիկիք՝ մի-երեսանի, կամ երկու-երեսա-
նի Ընդունում եմ նաեւ պատուէրներ ձեռնառ զներքին Գործարանս գտնվում է Հաւ-
լարարում, հայի մազաղինի դիմաց, տուն Միրզանիկի № 20: Իսկ իմ պատրաստած ի-
րեղենները կարելի է գտնել Սիօնի փողոցում, Արծրունի քարվանսարայում:

6—6

Մի գերդաստան

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԳԻՇԵՐՈՐԹԻԿՆԵՐԻ

Դիմել հեռուէլ հասցեով. Սօլջակ՝ Գանուկի փողոց, տուն Շաղինեանցի № 25.

6—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ:

Չորեքշաբթի, հոկտեմբերի 25-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգենաւը, նաւա-
պետ ԳԱՐԻԳ (GARRIGUES) գլուխ կը զնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն,
Կ. Պոլիս և Մարսել: Տեղեկութիւններ մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին. Բաթումում Լէմբոզուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Ար-
ժունի գալլերէում, № 114.

(Շ.) 2—3

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԵՆԱԿԻ

Մասնաւորապէս բժշկում է էրկտրականութեամբ, ֆարադէական և գալվանական հոսանքով
ձեռքերի և ոտների անդամաւորութիւնից, բնականօրէն, ներքինի նիւնդութիւններից և կոնտ-
րակտուրայից (մկանունների անդամաւորութիւն), բժշկում է կոլերիքի և խոլերիքի անդամաւոր-
ութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին:

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյան
7 ժամից մինչև 8 ժամ: Տուն Պոպովի Միքայէլեան փողոցի անկիւն № 9 և Նիսաւիտիսկայա № 2,
լնտեսպանատեղի մօտ, վարձուցով կահաւորված սենեակների դիմաց:

Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Интендантства,
противъ Воронцовск. номеровъ.

11—14

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ՏԱՆՏԻԿԻՆ ԵՒ ԽՈՀԱՆՈՑ

ԵՐԿՈՒ ՄԱՍԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԳԻՐԻՔԻ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

400-ի չափ տեղական և եւրօպական՝ աժան, համեղ և անձնաւ կերակուրներ
պատրաստելու եղանակ:

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ր Ի

200-ից աւելի տնտեսական գիտելիք՝ քաղցրաւերի, թթուեղէն, պտուղների,
բանջարեղէնի և կանաչեղէնի պահպանելու և չորացնելու կաթնատնտեսութիւն
և զանազան գիտելիք:

Կազմեց Յ. ՄԵԼԻՔ-ԲԱՆՏԱՄԵԱՆՑ

ԳԻՆՆ Է 1 Ր 50 Կ.

Վաճառվում է բոլոր յայտնի զրավաճառանոցներում և Մարտիրոսեանի տպա-
րանում: Վերջինս մօտ 10-ից աւելի զննողին՝ 10 տոկոս զիջում կը լինի:

8—8

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(կուկիա, վարձուցով արձանի հանդիպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

Մ Ա Ռ Ա Տ Ն Ե Ր Ը

ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երկխոյոց և կանանց ց.
ԿԻՐԻՔԻՆԻ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11 1/2—12 ժ. կանանց և երկխոյոց ց.
ԲԵՆԿԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, թմր. ց. և սիֆիլիսի (միջառու. և ատամնաղաւի)
ԱՐՏԵՄԻՆՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երկխոյոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒԿԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երկխոյոց և ջլային ց. (էրկտրոտերապիա)
ԲԵՆԿԵՎՍԿԻ—7—8 ժամ.

Հիւանդանոցում են մանկաբարձուհի Երկանցեան և Արտաղեան:
Վճար—50 կ. Համախորհրդի (կոմսիտետի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի փոխ-վարատեսուչ ԲՈՒԴԿՈՎՍԿԻ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՐԱՂԱ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՈՒՄ
ԲԱՅՎԱԾ Է ԳՐԱԴԱՐԱՆԻ

Գրադարանը չունենալով սեփական միջոցներ, դիմում է յարգելի հէղինականներին,
Բարգմանիչներին և ուրիշ անձանց, խնդրելով օգնել զրադարանին՝ թէ՛ զրբեր նուիրե-
լով, և թէ՛ զրամական նուէրներ անելով: Ցանկացողները թէ՛ զրբերը և թէ՛ զրամական
նուէրները կարող են յանձնել Թիֆլիսում Կենտրոնական զրավաճառանոցին, ուր և ուղի
բոլորը կը մոյցնվեն: Թաւրիզի հայոց առաջնորդից տուած ժապաւինեալ մատանի մէջ:

8—10

ԳԱԼՄԱՆԻՆ

Մարմնի մասերը, մանաւանդ ոտների մասերը
փոխելու պահպանող փաշի

ձախուլում է զեղաններում և զրոգիտների մօտ
Եւրօպայի նշանաւոր քաղաքներում և կայսրու-
թեան բոլոր քաղաքներում ԳԼԽԱՌՈՐ ՊԱԼՄԱՆ
գտնվում է ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, նաւաղի, զեղանան
տիրոջ, ֆարմաշայի մաղիսար վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ
մօտ, Էրկտրապիայի փողոց, № 39. Գալմանի
մօտ արկղը արժէ վարչապալում 50 կ. փաշը
30 կոպ.

ՊԼՏԻ Է ԶԴՈՒՇԱՆԱԼ ԿԵԼՏՈՒՄՆԵՐԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկղը կրէ փո-
շու զործածութեան բացատրութիւնը և ֆաբրիկի
յուշանդիւրի մեղաւորները:

Մ. 24869

10—10 (Ե)

Въ редакціи газеты „МШАКЪ“ прода-
ются слѣдующія брошюры: 1) „Экономич.
Положение Турецкихъ Армянъ“, публич.
лекція Д—ра Г. Арзруни, перев. съ арм.
А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Eco-
nomische Lage der Armenier in der Türkei,
ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni,
übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k.
3) Die Hungersnoth in Türkisch-Armenien,
ein Vortrag von Dr. Grigor Arzruni, über-
setzt von Amiranjanjanz. Preis 20 kop.

Погородные, желающие получить бро-
шюры, благоволятъ присылать по 30 коп.
почтовымъ маркамъ, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшахъ“,
или Tiflis, Redaction „Mschak“. (Ե)